Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 29-05-2023 թ. որոշմամբ**
**««ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.00136 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2003-06-13 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 02568189 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)93428010 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | armenbux@gmail.com |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| Գագիկ Ծառուկյան | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| Գագիկ Ծառուկյան | | |
| Ռոզա Ծառուկյան | | |
| Ջավահիր Ծառուկյան | | |
| Սեդրակ Առուստամյան | | |
| Դավիթ Մանթաշյան | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Անահիտ Ծառուկյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 4 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկման ծախսեր | 4,583,450 |
| | Վարձակալական ծախսեր | 7,065,000 |

| | | |
|---|---|---|
| | Վարչակառավարչական ծախսեր | 2,139,653 |
| | Բարեգործական հատկացում «Բեզոար» բնապահպանական հիմնադրամին | 2,600,000 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Վարչակառավարչական | 4,728,940 |
| | Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկման ծախսեր | 4,195,629 |
| | Բարեգործական հատկացում «Բեզոար» բնապահպանական հիմնադրամին | 3,900,000 |
| | Բարեգործական հատկացում Ստեփանակերտ քաղաքի Մաշտոցի անվան Հանրապետական գրադարանին | 10,832,000 |
| | Նյութական աջակցության ցուցաբերում  Երևանի պետական համալսարանին | 10,000,000 |
| | Նյութական աջակցության ցուցաբերում <<Միթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք>>  ԲՀ | 12,000,000 |
| | Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրի կառուցման աշխատանքներ | 93,100,000 |
| | Վարչակառավարչական | 876,000 |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 138,756,569 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | Անշարժ գույք | 29,294,500 |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | Գյուղատնտեսական պարարտանյութ | 42,622,000 |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | Անշարժ գույք | 15,525,000 |
| | Սպորտային գույք | 72,050,000 |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Նվիրաբերություն գյուղացիականտնտեսությունների ն պարարտանյութի անհատույց տրամադրում | 42,622,000 | |
| Բարեգործական հատկացում «Բեզոար» բնապահպանական հիմնադրամին | 6,500,000 | |
| Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկման ծախսեր | 8,779,079 | |
| Բարեգործական հատկացում Ստեփանակերտ քաղաքի Մաշտոցի անվան Հանրապետական գրադարանին | 10,832,000 | |

| | |
|---|---|
| Նյութական աջակցության ցուցաբերում Երևանի պետական համալսարանին | 10,000,000 |
| Նյութական աջակցության ցուցաբերում <<Միթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք>> ԲՀ –ին | 12,000,000 |
| Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրի կառուցման աշխատանքներ | 93,100,000 |
| Նվիրաբերություն Կոտայքի մարզի , Հացավան գյուղի բնակչին բեռնատար ավտոմեք.տրամադրում | 3,563,891 |
| Նվիրաբերություն, տրամադրել «Զինված ուժերի գլխավոր շտաբ» Պետական կառավարչական հիմնարկին 72 050 000 ՀՀ դրամի դահուկներ և դահուկորդի համազգեստ և կոշիկներ | 72,050,000 |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 315,512,172 |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 259,446,970 |

**Նշումներ՝**

| |
|---|
| Կ |

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 13 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by SIMONYAN ARMEN 2109590270
Date: 2023.06.12 10:14:56 AMT

*«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ*
*ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*
*2022Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ*

| ԱԿՏԻՎՆԵՐ | Ծան | 31.12.2022թ | 31.12.2021թ |
|---|---|---|---|
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 460 296 | 451 933 |
| Տեղակայման ենթակա սարքավորումներ | 4 | 8 577 | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **468 873** | **451 933** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 4.1 | 42 547 | 43 891 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 4.2 | 87 593 | 1 890 |
| Դրամական միջոցներ | 4.3 | 285 | 11 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **130 425** | **45 792** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **599 298** | **497 725** |
| **Սեփական կապիտալ և պարտավորություններ** | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| կանոնադրական կապիտալ | | | |
| Կուտակված շահույթ | | | |
| Պահուստային կապիտալ | | | |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ | 4.6 | 4 290 | 4 290 |
| Ակտիվներին վերաբերվող շնորհներ | 4.4 | 553 690 | 451 933 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | | | |
| **Ըդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **557 980** | **456 223** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Առևտրական և այլ կերդիտորական պարտքեր | 4.7 | 1 458 | 1 067 |
| Եկամուտներին վերաբերվող շնորհներ | 4.5 | 39 280 | 39 855 |
| Այլ պարտավորություններ ծախսումների գծով պահուստներ | 4.8 | 580 | 580 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **41 318** | **41 502** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | 599 298 | 497 725 |

*Գլխավոր տնօրեն* *Անահիտ Ծառուկյան*

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ մարտի 29-ին*

<<ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ >> բարեգործական հիմնադրամ

***Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին***

*2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ*

| | **Ծան.** | **2022թ** | **2021թ** |
|---|---|---|---|
| Շնորհից եկամուտ/ ծախս | 4. 9 | 214 359 | 135 062 |
| Այլ եկամուտ | | | 1339 |
| Ծրագրի ծախսեր | 4.10 | (155 346) | (39 064) |
| Վարչական ծախսեր | 4.11 | (59 013) | (97 337) |
| Այլ ծախսեր | | | |
| Փոխարժեքային տարբերությունից եկամուտ | | | |
| Ֆինանսական եկամուտ | | | |
| **Գործառնական գործունեությունից շահույթ /վնաս/** | | - | - |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | | | |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ)** | | - | - |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | | |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | - | - |

*Գլխավոր տնօրեն* *Անահիտ Ծառուկյան*

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ մարտի 29- ին*

## <<ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ >> բարեգործական հիմնադրամ

### *Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ*

*31 դեկտեմբերի 2022թ ավարտվող տարվա*

Հազար Դրամ

| | 2022թ | 2021թ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից հոսքեր** | | |
| Մուտք շնորհներից | 147 664 | 38 787 |
| Այլ մուտքեր | 1 080 | |
| Վճարումներ մատակարարներին | | |
| Նյութերի և ապրանքների գծով | 1 786 | 26 170 |
| Նվիրատվություն | 28 500 | 9 300 |
| Աշխատանքների և ծառայությունների գծով | 113 886 | |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | 796 | 1252 |
| Վճարումներ հարկերի՝ ներառյալ շ/հարկի գծով | 792 | 866 |
| Այլ վճարումներ | 2 710 | 1 188 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր** | **274** | **11** |
| **Ներդրումային գործունեությունից հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումից | | |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր** | | |
| **Ֆինանսական գործունությունից հոսքեր** | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր | | |
| Վարկերի և փոխառությունների մարումից ելքեր | | |
| Վճարված շահաբաժիններ | | |
| Մուտք շնորհներից | | |
| Անհատույց տրված ակտիվներ | | |
| **Ընդամենը Ֆինանսական գործունությունից զուտ հոսքեր** | | |
| **Ընդամենը զուտ հոսքեր** | | |
| Ներքին շարժեր* | | |
| Արտարժույթի փոխարժեքից տարբերություններ | | |
| **Դրամական միջոցների մնացորդը առ 01 հունվար** | **11** | **-** |
| **Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբեր** | **285** | **11** |

*Գլխավոր տնօրեն* *Անահիտ Ծառուկյան*

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ մարտի 29- ին*

<<ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ >> բարեգործական հիմնադրամ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

1. Գործառնությունների բնույթը եվ ընդհանուր տեղեկատվություն

Գագիկ Ծառուկյան Բարեգործական Հիմնադրամը այսուհետ Հիմնադրամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ հուլիսի 13-ին, գրանցման համար՝222.160.00136:
Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը և Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը հոգեբարձուների խորհուրդն է ՝ 5 անձից բաղկացած:
Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրեն՝ Անահիտ Ծառուկյանը:
Հոգեբարձուների խորհրդի անդամներն են՝

| | |
|---|---|
| Խորհրդի նախագահ | Գագիկ Ծառուկյան |
| Անդամներ | Ռոզա Ծառուկյան |
| | Ջավահիր Ծառուկյան |
| | Սեդրակ Առուստամյան |
| | Դավիթ Մանթաշյան |

Հիմնադրամի հիմնական նպատակն է

- Օժանդակել, հատկապես Կոտայքի տարածաշրջանում, Հայ առաքելական եկեղեցուն, սոցիալապես անապահով և կարիքավոր ընտանիքներին, որբ և ծնողազուրկ երեխաներին, մանկատներին, ծերերին ու հաշմանդամներին, ուսանող երիտասարդությանը, մարզիկներին, գիտության , մշակույթի ,գրականության, արվեստի բնագավառներին, կրթական հաստատություններին, առողջապահական հիմնարկներին, արտադրության, ներառյալ գյուղատնտեսական բնագավառում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց,

2022թ . Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 4 մարդ, որից 2-ը գտնվում են մինչև 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում /2021թ.՝ 4 մարդ/

2. Պատրաստման հիմունքներ

*2.1 Համապատասխանություն*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական գրանցումների հիման վրա՝ Փոքր և Միջին Կազմակերպությունների /այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ/ պահանջներին համապատասխան

*2.2 Անընդհատության սկզբունք*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա

*2.3 Չափման հիմունքները*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական գործիքների, օգուտների և վնասների միջոցով արտահայտվող ներդրումների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումների, որոնք չափվում են իրական արժեքով:

*2.4 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը*

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի գործառնական արժույթը:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

*2.5 Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում*

Ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը,

ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերվող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

***3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը***

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:
Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

*3.1 Արտարժույթ*

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը:
Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները , որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:
Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

***3.2 Հիմնական միջոցներ***

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գմահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր, շինություններ /եկեղեցի/ | 100 տարի |
| Մեքենաներ և սարքավորումներ | 5-30 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | 5 տարի |
| Արտադրական, տնտեսական գույք | 8 տարի |

***3.3 Շնորհներ***

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասն հաշվետվություններում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորրթյուններում և ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

***3.4 Հատուցումներ աշխատակիցներին***

Աշխատակիցներին կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները և պարգևավճարները:

***3.5 Ֆինանսական գործիքներ***

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են
Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:
Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:
Կարճաժամկետ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունները չափվում են գործարքի գնով, քանի որ դրանց զեղչման ազդեցությունը աննշան են: Դրանց թվին են դասվում.

***Ֆինանսական ակտիվներ***

դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները

***Ֆինանսական պարտավորություններ***

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿՈՆՏՌՈԼ ՍԹԱՐ »
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
«CONTROL STAR»
LIMITID LIABILITY
COMPANY

/Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ /ՀԿ խորհրդի 18.11.2022թ-ի Թիվ 42-Ա որոշմամբ ռեեստրում գրանցման ամսաթիվը՝ 18.11.2022թ, հիմնական գրանցման համարը Թիվ /1220728/

ՀՎՀՀ 01046204
ք. Երևան, Էմինեսկու 2փ . 10/2

# Անկախ աուդիտորի եզրակացություն

«Գագիկ Ծառուկյան» Բարեգործական Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամներին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գագիկ Ծառուկյան» Բարեգործական հիմնադրամը, այսուհետ «Ընկերություն» ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

*Կարծիքի հիմքը*

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական

հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Այլ հանգամանք*

Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2021թ-ի ֆինանսական հավետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի վերաբերյալ տրվել է չձևափոխված կարծիք 2022թ ապրիլի 12-ին:

*Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթուրումը, երբ այն առկա է: Խեղաթուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝

-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական

ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը

-Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը

-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն՝ Լ. Շահոյան

Աուդիտի ղեկավար՝ Հ. Կարապետյան

«ԿՈՆՏՌՈԼ ՍԹԱՐ» ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն,

ք. Երևան էմինեսկու 2փ 10/2տ

2023թ. մայիսի 26

*4. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ*

| Հազար դրամ | Շենքեր /եկեղեցի/ | Հողամասեր | Մեքենաներ և սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Արտադրատնտեսական գույք | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| Ակզբնական արժեք | | | | | | |
| Առ 31 դեկտեմբեր 2020թ. | 308 402 | 126 343 | 212 153 | 7 127 | 4 173 | 658 198 |
| Ավելացում | | | 1 289 | | | 1 289 |
| Առ 31 դեկտեմբեր 2021թ. | 308 402 | 126 343 | 213 442 | 7 127 | 4 173 | 659 487 |
| Ավելացում | | 44 820 | | | | 44 820 |
| Նվազեցումներ | | | | (3 563) | | (3 563) |
| Առ 31 դեկտեմբեր 2022թ. | 308 402 | 171 163 | 213 442 | 3 564 | 4 173 | 700 744 |
| Կուտակված Մաշվածություն | | | | | | |
| Առ 31 դեկտեմբեր 2020թ. | 21 836 | - | 137 326 | 4 911 | 1 475 | 165 548 |
| Ավելացում | 3 067 | | 37 749 | 752 | 438 | 42 006 |
| Առ 31 դեկտեմբեր 2021թ. | 24 903 | - | 175 075 | 5 663 | 1 913 | 207 554 |
| Ավելացում | 3 084 | | 31 468 | 1 464 | 441 | 36 457 |
| Նվազեցումներ | | | | 3 563 | | 3 563 |
| Առ 31 դեկտեմբեր 2022թ. | 27 987 | - | 206 543 | 3 564 | 2 354 | 240 448 |
| Զուտ հաշվեկշռային արժեք | | | | | | |
| Առ 31 դեկտեմբեր 2021թ. | 283 499 | 126 343 | 38 367 | 1 464 | 2 260 | 451 933 |
| Առ 31 դեկտեմբեր 2022թ. | 280 415 | 171 163 | 6 899 | - | 1 819 | 460 296 |

Այլ ոչ ընթացիկ ակտիվը իրենից ներկայացնում է Հատիս լեռան վրա կառուցվող «Քրիստոսի արձանի» նախապատրաստական աշխատանքնը:

*4.1 Պաշարներ*

| Հազար դրամ | 31.12.2022թ. | 31.12.2021թ. |
|---|---|---|
| Հումք և նյութեր | 34 010 | 35 354 |
| Ապրանքներ | 8 537 | 8 537 |
| **Ընդամենը** | 42 547 | 43 891 |

*4.2 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

| Հազար դրամ | 31.12.2022թ. | 31.12.2021թ. |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 3 360 | 3 360 |
| Տրված կանխավճարներ | 126 147 | 38 728 |
| Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստ | (42 820) | (42 820) |
| Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով | | 732 |

| | | |
|---|---|---|
| **Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր** | **86 667** | **-** |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում | 906 | 1 890 |
| • Հողի հարկ | 896 | 896 |
| • Միասնական հաշվում առկա գումար | 10 | 994 |
| **Ընդամենը դեբիտորան պարտքեր** | **87 593** | **1 890** |

Առևտրային դեբիտորական պարտքի հնարավոր կորուստը ճանաչվել է 2021թ-ին, հաշվի է առնվել դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Ղեկավարությունը հավաստացած է, որ ստեղծված կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից զատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

### *4.3 Դրամական միջոցներ*

| Հազար դրամ | 31.12.2022թ. | 31.12.2021թ. |
|---|---|---|
| Դրամարկղ | - | - |
| Բանկային հաշիվներ | 285 | 11 |
| **Ընդամենը** | **285** | **11** |

### *4.4 Ակտիվներին վերաբերող շնորհներ*

| Հազար դրամ | 31.12.2022թ. | 31.12.2021թ. |
|---|---|---|
| **Մնացորդը տարեսկզբին** | **451 933** | **493 939** |
| Շնորհի ստացում | 138 214 | |
| Շնորհի ծախսում | 36 457 | 42 006 |
| **Մնացորդը տարեվերջին** | **553 690** | **451 933** |

Ակտիվներին վերաբերվող շնորհների գումարի մեջ ներառվել է Հատիս լեռան վրա կառուցվող «Քրիստոսի արձանի» համար Քանդակ Տրիո և Պենո Դեկոր ՍՊ ընկերություններին փոխանցված կանխավճարները՝ 84 700, 0 հազ.դրամ ընդհանուր գումարով:

### *4.5 Եկամուտներին վերաբերող շնորհներ*

| Հազար դրամ | 31.12.2022թ. | 31.12.2021թ. |
|---|---|---|
| **Մնացորդը տարեսկզբին** | **39 855** | **61 076** |
| Շնորհի ստացում | 315 512 | 71 834 |
| Շնորհի ծախսում | 316 087 | 93 055 |
| **Մնացորդը տարեվերջին** | **39 280** | **39 855** |

### *4.6 Ստացված փոխառություններ*

2012թ. հունվարի 25-ին կնքվել է փոխառության պայմանագիր Հիմնադրամի և խորհրդի նախագահի միջև, համաձայն որի Հիմնադրամը ստացել է 4 290 հազ.դր ամ անտոկոս փոխառություն՝ 15 տարի մարման ժամկետով:

### *4.7 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

| Հազար դրամ | 31.12.2022թ. | 31.12.2021թ. |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 108 | 108 |
| Կրեդիտորական պարտքեր ստացված | 1163 | 356 |

| | | |
|---|---|---|
| ծառայությունների գծով | | |
| Կարճա-ամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում | 41 | 119 |
| • Եկամտահարկ | 40 | 97 |
| • Այլ պարտադիր վճարների գծով | 1 | 22 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով | 131 | 455 |
| Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության բծով | 15 | 29 |
| *Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր* | 1 458 | 1 067 |

*4.9 Եկամուտներին վերաբերվող շնորհներ*

| | 2022թ հազՂդրամ<br>31.12.22թ. |
|---|---|
| Դրամական միջոցների նվիրատվություն | 147 664 |
| Անհատույց ստացված պաշարների և այլ ակտիվներ | 66 695 |
| ***Ընդամենը ստացված շնարհներ*** | ***214 359*** |

*4.8 Պահուստ*

| | 31.12.22թ. | Հազար դրամ<br>31.12.23թ. |
|---|---|---|
| Պահուստ արձակուրդային վճարման գծով | 580 | 580 |
| *Ընդամենը* | **580** | **580** |

*4.10 Ծրագրային ծախսեր*

| | 2022թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Հազար դրամ<br>2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկմոն ծախսեր | 1 342 | 10 473 |
| Նվիրաբերություն Արագածոտնի մարզի բնակչին գյուղ. տեխնիկայի անհատույց տրամադրմում | | 8 321 |
| Նվիրաբերություն գյուղացիական տնտեսություններին պարարտանյութի անհատույց տրամադրում | | 8 470 |
| Դրամական (նյութական) աջակցության ցուցաբերում «Սիթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք»ԲՀ-ին | 12 000 | 5 000 |
| Գյուղ.նշանակության պոմպերի նվիրաբերություն Արմավիրի մարզի գյուղացիներին | | 2 500 |
| Նվիրաբերություն Ջրառատ ԲԿ-ին | | 1 500 |
| Նյութական աջակցության ցուցաբերում Զարկ | | 1 500 |

| | | |
|---|---|---|
| Մեդիա ՍՊԸ-ին | | |
| Նյութական աջակցության ցուցաբերում կոտայքի թեմի առաջնորդարանին | | 800 |
| Ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցում | | 500 |
| Սպորտային հագուստի և դահուկների նվիրաբերություն ՊՆ-ին | 72 050,0 | |
| Նվիրաբերություն ԿԳՄՍ-ին ( գույք՝ Ստեփանակերտի մշակույթի նախարարությանը) | 10 832 | |
| Նվիրաբերություն Եղեգնաձորի Բեզուար ԲՀ-ին | 6 500 | |
| Դրամական աջակցություն ԵՊՀ-ին | 10 000 | |
| Գյուղ.նշանակության պոմպերի նվիրաբերություն Կոտայքի մարզի գյուղացիներին | 42 622 | |
| *Ընդամենը* | 155 346 | 39 064 |

*4.11 Վարչական և այլ ծախսեր*

| | 2022թ. | Հազար դրամ 2021թ |
|---|---|---|
| Փոխհատուցում աշխատակիցներին | 2340 | 4072 |
| Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր | 36 457 | 42 006 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 4 394 | |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 500 | 600 |
| Բանկային, ապահովագրության, պահպանության և տրանսպորտային ծախսեր | 10 | 10 |
| Դեբիտորական պարտքերի պահուստ | | 42 820 |
| Չփոխհատուցվող ծախսեր՝ հարկեր, տուրքերից | 1 638 | 628 |
| Վարչական այլ ծախսեր | 13 674 | 7 201 |
| *Ընդամենը* | 59 013 | 97 337 |

# 5. Ֆինանսական գործիքներ

## 5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3,5-ում

### 5.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերվում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին

- **Ֆինանսական ակտիվներ**

| | | Հազար դրամ |
|---|---|---|
| | 31.12.2022թ | 31.12.2021թ |
| **Դեբիտորական պարտքեր** | | |
| Առևտրայինն դեբիտորական պարտքեր | 856 687 | |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 285 | 11 |
| Ընդամենը | 856 972 | 11 |

- **Ֆինանսական պարտավորություններ**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 08.06.2023 08:51